

գամ նոր բան դիտելով : Ինչ անթիւ պատկերներուն մէջը , որոնցմով թէ խորանները և թէ գմբէթներն ու կամարները զարդարուած են , գրեթէ չես գտներ մէկ նկարած պատկեր մը . ամէնքն ալ միւսիոնագործ մանր քարերով շինուած են՝ որ տեսնողը չճանչնար : Ընթէ թէ միայն պատկերները , այլ և զարդարանքներն ու խորաններուն գոգնոցները , բոլորն ալ միւսիոնագործ շինած են . անանկ որ աս եկեղեցւոյն մէջը կրակ իյնալու ըլլայ նէ , սեղաններու սփռոցներէն ուրիշ բան չգտներ այրելու :

Իհաքեզի աս խելքէ մտքէ վեր տալ ճարին ստորագրութիւնը , որ չտեսնողին երազի մը պէս կ'երևնայ : Եւ թէ պէտ Ինգեայ մարգարէին խօսքը՝ « Եթէ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն » , հոգեւորապէս առնելու է սուրբ եկեղեցւոյն վրայ , բայց թէ որնիւթապէս ալ առնելու ըլլանք նէ , Սողոմոնին տաճարը ոչ ասկէց մեծ և ոչ ասկէց հարուստ կրնայ եղած ըլլալ . ինչու որ եթէ անիկայ ոսկով պատած ալ էր նէ , վերջապէս ոսկին գին մը ունէր . իսկ աս երևելի ճարտարներու հրաշակերտ պատկերներն ու արձանները , որ սուրբ Պետրոսի ժամուն պատերն ու գմբէթները կը պատեն , գին չունին . անանկ որ Ինգեղիացիք աս արձաններուն շատին ծանրութեամբը ոսկի ու զեր են վճարել՝ զանոնք գնելու համար , ու չեն կրցած գնել :

*

Կրօնը այնպիսի մեծ բան է , որ եթէ ոմանց մութ երևնալով չուզեն աշխատիլ ու քննել , արժանապէս զուրկ կը մնան անկէ :

ՓԼԱՊԵԼԱ :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

(Ժողովոյ Բոյները :

(ԺՈՒՉՆՈՑ Բոյներուն վրայ համառօտ խորհրդածութիւն մը դրեր էինք Բաղմավիպիս մէջ՝ . բայց քանի մը գիտելիք ալ հոս աւելցրնենք՝ փափաքելով որ բարեսէր ընթերցողները բնականին վրայ զմայլին ու անկէ իրենց բարոյականին համար խելք սորվին : Եւ յիշուի . որովհետեւ կը տեսնենք որ նաև Տէրն մեր իր աստուածային խնամքը մեզի ցուցնելու համար , թուուններուն նայեցէք ու խելք սորվեցէք կ'ըսէ : Ինչ անմեղ թուչնիկներէն կրնան սորվիլ շատ ծնողներ ալ թէ ինչպէս պէտք է սիրեն ու հոգան իրենց զաւկները . որդիք ալ գէթ անոնց խնամքէն ու գութէն կրնան անդրադառնալ թէ իրենց ծնողաց սէրն ու հոգը որչափ է իրենց վրայ :

(Ժուչունները հաւկիթ ածելէն առաջ՝ կը նային որ բոյն մը կամ բնակարան մը շինեն ու պատրաստեն . աս բոյնը շինելու համար մեծ աշխատանքով զանազան նիւթեր կը ժողվեն ու զարմանալի վարպետութեամբ մէկմէկու կը յարմարցնեն . ու բոյնին ներսի կողմը փափուկ ընելու համար , իրենց մարմնոյն վրայի կակուղ ու բարակ փետուրները կը փետտեն ու մէջը կը շարեն : Իսկ բաներս անանկ զարմանալի յօժարամտութեամբ ու սիրով մը առաջ կը տանին որ ամենեւին դժուարութենէ մը չեն յաղթուիր :

Չագերը ելլելէն ետքը անոնց կերակուր ալ պատրաստելու է : Կը տեսնենք որ կենդանածինները կաթով կը մեծցընեն իրենց ձագերը , միջատները՝ դեռ հաւկըթէն բոլորովին դուրս չելած ձագը ան կերակրոյն վր

կը դնեն որ ետքը պիտի ելլէ ուտէ . բայց անոնց կարգաւորեալ կերակուր պատրաստելը որ մեծ աշխատանք է , թռչուններուն պահուած է . ու կերակուրը գտնելէն ու բոյնը բերելէն ետքը՝ ամէն մէկուն առանձին առանձին հաւասար բաժին կը հանեն անկէց : Օ արմանալին ան է որ աս բաներուն մէջ ամենեւին փորձառութեան կարօտութիւն չունին . հապա ինչպէս տարեցը՝ ասանկ ալ առջի անգամ հաւկիթ ածող թռչունը նոյն սէրն ու հոգը իր զաւակացը վրայ կը ցուցնէ , և նոյնպէս արագութեամբ ու սիրով կ'աշխատի :

Կերակուրը պատրաստելէն առաջ , որպէս զի հաւկիթները կարենան բացուիլ՝ բոյնին մէջ տաքութիւն պէտք է . անոր համար թռչունները շաբաթներով իրենց հաւկիթներուն վրայ թռչաւի կընստին , ու իրենց մարմնովը անոնց չորս գիէն աղէկ մը կը գոցեն . և իրենց աս պարտքը լաւ կատարելու համար՝ իրենց բոլոր զբաւարձութիւնները կը մոռնան , ու հազիւ թէ քիչ մը կերակուր կ'ուտեն որ ապրին : Բայց թէ որ կերակուր փրկտուելու համար հեռու տեղուանք երթալ հարկ ըլլայ , թռչուններէն ումանք , ինչպէս հասարակ բազը , հաւկիթները յարգով կամ բրգով կը ծածկեն , որպէս զի թէ ջերմութիւնը պահուի , և թէ (որ աւելի հաւանական կ'երևնայ) թշնամեաց ձեռքը չիյնան ձագերը :

Երբոր ձագերը հաւկիթէն ելլեն , ծնողքը անոնց մաքրութեանն ալ մասնաւոր փոյթ կ'ընեն . ուստի մէկէն հաւկիթին կ'աւանդները կտուցով դուրս կը ձգեն , որպէս զի չըլլայ թէ կերպով մը թռչնիկներուն առողջութեանը վնաս ըլլայ : Նոյնպէս անոնց ծիրտըն ալ՝ քանի որ ձագերը պզտիկ են՝ իրենք կ'առնեն բոյնէն վար կամ հեռու կը ձգեն :

Սեծ փոյթ ունին թռչունները ձագերնին թշնամեացմէ պաշտպանելու : Եւ մէնքը գիտեն թէ հաւը ինչ գուծ

ունի իրեն ձագերուն վրայ , և ինչպէս շատ անգամ իր կեանքը անոնց համար վտանգի մէջ կը դնէ : Եւ բանս նաեւ ամէն թռչնոց վրայ յայտնի կ'երևնայ . բայց ոմանք թշնամին անոնցմէ հեռացնելու համար տեսակ տեսակ գիւտեր ու հնարքներ կը բանեցնեն . ինչպէս կաքաւին համար կը պատմեն թէ տեսնելով որ շուն մը իր ձագերը յափշտակել կ'ուզէ , թւերը բացած՝ վիրաւորուածի պէս ասդին անդին տապալտրկելով կը սկսի քալել , որպէս զի շունը ձագերը ձգէ ու իր վրան վազէ . ետքը ինքը կը թռչի կ'երթայ : Նոյնպիսի հնարքներ կը բանեցնեն շատ անգամ նաեւ վայրի բազը , ծովային արտուտը և ուրիշ թռչուններ :

Հիմա տեսնենք թռչուններուն բոյն շինելու կերպը : Չըր ամէն թռչուն նոյնպէս չպահեր . ոմանք բոյնը այլ և այլ խորշեր կամ խցիկներ կը բաժնեն , ոմանք ալ քսակի կամ պարկի ձևով պարզ բոյն մը կը շինեն , իւրաքանչիւրը իրեն ախորժակին յարմար , բայց նոյն ցեղի թռչունները ամէն ալ իրարու նման :

Ինչգիտա մօտ տարիներս գիրք մը տպուեր է՝ (1) ունոց ճարտարապետութիւն անունով . ասոր մէջ տասուերկու տեսակ բոյն կը համուի , ամէն մէկուն տեսակին ու ձևին նայելով : Եւ առջին տեսակը տիպապա թռչնոց բոյն ըսուածն է , որ իրենց բոյնը հողուն տակը կը շինեն , ինչպէս բուռի մէկ տեսակը և ուրիշ թռչուններ . երկրորդ՝ անոնք որ գետնին երեսը բոյններնին կը շինեն . երրորդ՝ որ ֆաթրոց բոյն ըսուածները , որոնց մէջ ամենէն ճարտարը ծիծառն թռչունը կը սեպուի . նոյնպէս ալ տորդիկը որ բոյնին ներսի դին կաւով կը ծեփէ . չորրորդ՝ հիւսն ըսուածները , ինչպէս անծեղը և ուրիշ քանի մը տեսակ թռչուններ որ կտուցով ծառին բունը կը փորեն ու մէջը իրենց համար բոյն կը շինեն . հինգերորդ՝ հիւսնապա ըսուածները , որոնց մարմինը չափէ դուրս տաք ըլ-



Պալմիտի տեղում, և երբ Բոյնը :

լալով՝ ուրիշ թուշոց պէս մասնաւոր բոյն չեն շիներ ձագերնին պատասպարելու, հապա միայն պարզ խռիւնէրով ու ծառի ճիւղերով խղիկ մը կը պատրաստեն. ինչպէս արծիւը, ձկնէ կուլը, արագիւն ու կռուակը: Արագիւն համար կ'ըսեն թէ՝ Պերսեպոլոյ աւերակներուն բարձր սիւներուն ծայրերը կը դնէ իր բոյնը: Սեցերորդ տեսակը սալապարձ թուշոցներ կ'ըսուին՝ բոյններն սակառիի ձև ունենալուն համար, որ զանազան խոտերով ու ծիղերով կը շինեն. եօթներորդ՝ սալապարձ թուշոցներ որ զարմանալի վարպետութեամբ իրենց բոյնը կը հիւսեն. ութերորդ տեսակին ներքէ դէպքէ կ'ըսուին, ասոնց մէջ ամենէն երեւելին է Վերիկայի սարեալը, որ իր բոյնին ներսի դին տեսակ մը երկայն ու կակուղ խոտերով կը շինէ, անանկ մաքուր՝ որ կարծես թէ ասեղով բանուած է: Արսեն թէ կնկան մէկը աս թուշոցին զարմանալի վարպետութիւնը տեսնելով հարցուցեր է թէ՝ Արդեօք ասոր գուրպայ հիւսել չէ՞նք կրնար սորվեցնել: Հնդկաստանի մէջ աս տեսակ թուշոցն մը կայ որ լայն տերեւներով ծառ մը կ'ընտրէ, ետքը մէկ չորցած տերեւ մը ուրիշ կանանչ տերեւի մը վրայ բարակ թելերով կը կարէ, ու անիկայ իրեն բոյն կը շինէ: Երեսերորդ տեսակը Խաղէֆարձ ըսուած թուշոցներն են որ զանազան նիւթեր քովէ քով յարմարցնելով՝ կապերտի կամ թաղիքի նման միակտուր բոյն մը կը ձևացնեն: Տասներորդ տեսակին բոյնները խժային շաղախով մը շինուած է՝ որ թուշոցն լորձուներով կը շաղուէ: Մետասաներորդ տեսակի թուշոցները գմբէթի ձևով կը շինեն իրենց բոյնը, ինչպէս են մեր երկիրներուն շատ թուշոցները: Արկոտասաներորդ տեսակինները գող Խաղէֆարձէ կ'ըսուին, որ իրենց համար բոյն չեն շիներ, հապա ուրիշ թուշոց բոյնին մէջ կ'ածեն իրենց հաւկիթները:

Սալապարձ ըսուածներուն կարգէն

կը սեպուի դէպքէ՝ անունով թուշոցնը, և անոր մէկ տեսակին բոյնն է պատկերին մէջ դրածնիս: Հասարակ դեղնուկը, որ տաճկերէն սարլ Գուլ կ'ըսուի, տորդիկի չափ թուշոցն մըն է՝ բոլոր մարմինը դեղին, ու միայն թւերն ու պոչերը սև՝ տեղ տեղ դեղին բծերով. միայն թէ էգին դեղնութիւնը աւելի ձիւթենիի գոյն է, թւերն ալ մոխրագոյն: Ախարհքիս ամէն բարեխառն ու տաք կողմերը կը գտնուի. Վերիկէինը ոսկեգոյն է, որ Հոլանտայինը գոյնգոյն, Աստորալիայինը կանանչ, Հնդկաստանինը սև. բայց ամենէն շատ ու աղուոր տեսակները Վերիկայիններն են:

Վմեն տեսակ դեղնուկներն ալ իրենց բոյնը քսակի ձևով կը հիւսեն ու բարձր ծառերու ճիւղերէն վար կը կախեն, բայց ամենէն վարպետը Վերիկայի Պալէմար դէպքէ ըսուածն է, ու աս պատկերին մէջինը ան է: Վերիկայ այնպէս սիրուն կը հիւսէ բոյնն որ տեսնողը կը զմայլի. առջի հիւսուածքը վուշի կամ կտաւի թելէ ու բրդէ է, անոր բոլոր վրան ալ ձիւթ պոչի մազերով հիւսած. ներսի դին փափուկ նիւթերով կը պատէ, ան նիւթերն ալ իրարու հիւսելով:

1 Ըստ ոմանց՝ Բարս, և արև: ՏՃ. սարլ Գուլ. Գ. Գ. Lorient. Լատ. Oriolus. Խա. Rigogolo.

ՀԱՆԵԼՈՒԿ

Մի եմ և կրկին,

Եւ յերկու բաժին

Առնեմ միշտ ըզմին:

Բերանս է սուսեր

Ի գօտուոյս ի վեր.

Խոսիմ անվէհեր:

Մինչ անատամն եմ

Դիւրագոյն ուտեմ

Քան թէ մինչ ծամեմ:

Միայն թէ զաչս իմ

Յանտոխցս ունիմ.

Յաչացս ըմբռնիմ:

ԱՊՐԻԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԴԱԳԱՂ